ՆԱԽԴԻՐՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ V ԴԱՐԻ ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԳՈՒՐԳԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Նախդիրները գրաբարի ուշագրավ խոսքի մասերից են, որոնցով հայ քերականները հատկապես զբաղվել են սկսած V դ. վերջերից, երբ հայերեն է թարգմանվել Դիոնիսիոս Թրակացու «Արուեստ քերականութեան» աշխատությունը։ Հետագա դարերի ընթացքում բուն նախդիրներն աստիճանաբար առանձնացվել են նախադրություններից, բնութագրվել է նրանց խոսքամասային արժեքը, հատկապես ուսումնասիրվել է նրանց՝ թեք հոլովների հետ զանազան իմաստների դրսևորումը։ Սակայն մինչև այժմ նախդիրների դրսևորած իմաստները ներկայացված են առհասարակ։ Նրանց գործածության հաճախականության հաշվարկման բացակայության հետևանքով նկատի չեն առնվել որոշակի դարաշրջաններ, առանձին հեղինակներ, ցույց չի տրվել իմաստների բացահայտման աստիճանային հաճախականությունը, կապ չի տեսնվել նախդիրների հաճախականության, դրսևորած իմաստների և տվյալ լեզվական շրջանի, հեղինակի, գրական ժանրե լեզվի ու ոճի միջև։ Մասնագետներն ինչ-որ չափով նշել են նաև նախդիրների բառակազմական արժեքը։ Այդ ուսումնասիրությունները շարունակվում են մինչև օրս, քանի որ գրաբարով գրված բնագրերը հնարավոր չէ խորությամբ հասկանալ՝ առանց ըմբռնելու նախդիրների միջոցով դրսևորված իմաստային նրբերանգները։

Մանուկ Աբեղյանը նախդիրներն ու նախադրությունները համարել է գրաբարի կապերը[1]։ Իսկապես, ընդհանուր գործառույթի տեսակետից դրանք ոչընչով չեն տարբերակվում ժամանակակից հայոց լեզվի կապերից, քանի որ նյութազուրկ են և դրվում են որևէ հոլովվող բառի վրա, վերջինս կապում են բային՝ երկուսը միասին դառնալով բայական անդամի մեկ լրացում։ Այս առումով բացառություն է կազմում բացառական հոլովը, որը ձևավորվում է թ նախդրի միջոցով։ Սակայն նախդիրները գործածական ավելի մեծ ոլորտներ են ընդգրկում, քան ժամանակակից հայոց լեզվի կապերը։ Հնարավոր չէ պատկերացնել գրաբարով գրված որևէ հատված, որտեղ չլինի նախդրային մի քանի գործածություն։ V դարից մեզ հասած հայ ժողովրդական բանահյուսական չափածո հատվածներում նախդիրների առկայությունը ցույց է տալիս, որ նրանց գործածությունը հայոց լեզվում բնականոն է, և V դարի մատենագիրները նախդիրները լայնորեն կիրառել են ոչ թե ոճական հնարանքների բերումով, այլ հետևել են ժամանակի խոսակցական լեզվին։

Նախդիրները դրվում են տարբեր հոլովների հետ, զուգակցվում են նախադրություններին[2] և ավելի շատ իմաստային ներբերանգներ են դրսևորում, քան կապերը։ Նրանց գործածությունը ոչ միայն պայմանավորված է գրաբարի որևէ լեզվական փուլի առանձնահատկությամբ, այլև հեղինակի լեզվի և ոճի յուրահատկությամբ, գրվածքի բովանդակությամբ։ Օրինակ, հենց V դ. դրսևորվում է նախդրագործածության բազմազանություն։ Դարավերջին, երբ սկզբնավորվում է հունաբան հայերենը, նախդիրների գործածությունը բավականին ակտիվանում է, ուժեղանում է առ, ընդ, ըստ նախդիրների նախածանցական կիրառությունը, նախդիրներով կազմվում են բազմաթիվ դարձվածներ։ Այնպես որ պատահական չէ, որ Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց»-ում կան

---

1 Մ. Աբեղյան, Գրաբարի քերականություն, Երևան, 1937, էջ 169։ Աբեղյանը նախդիրներն ու նախադրությունները կոչել է մեկ տերմինով՝ նախադրություն։

2 Օրինակ, Մ. Խորենացու «Պատմութիւն Հայոց»-ում կա նախադրություն+զ+հայցական կառույցի 148 օրինակ։

նախդիրներով ձևավորված շուրջ վեց հարյուր դարձվածներ։ Այսպիսով, նախդիրների կիրառությունը միմիայն քերականական հարց չէ, այն թափանցում է լեզվառճական ոլորտները, այլ գործոնների հետ նպաստում է բացահայտելու լեզվական փուլերի նմանություններն ու տարբերությունները, բնութագրելու այս կամ այն մատենագրի գրվածքների լեզվի ու ոճի առանձնահատկությունները։ Իսկ այս կարևոր հարցերը պարզաբանելու համար անհրաժեշտ է բացահայտել նախադրագործածության հաճախականությունը, մի հարց, որը մինչև օրս վրիպել է հայ քերականների ուշադրությունից։

Նկատի ունենալով այս հանգամանքը, մենք փորձեցինք որոշ չափով զբաղվել այս հարցով, և աստիճանաբար բացահայտվեցին մեկը մյուսից կարևոր ու ուշագրավ փաստեր։ Նախդիրների գործածության հաճախականությունը V դ. հայ մատենագրությունում բացահայտելու համար նկատի ենք ունեցել Կորյունի «Վարք Մաշտոցի», Եզնիկի «Եղծ աղանդոց», Եղիշեի «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին» և Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց» երկերը։ Նման ուսումնասիրություն կատարելու համար մեր ձեռքի տակ են եղել այս գրվածքների Համաբարբառները, որոնք կազմել են ՀՍՍՀ ԳԱ լեզվի ինստիտուտի գիտական աշխատողները[3]։

Այս ընտրությունը պատահական չէ։ Կորյունի գիրքը սկզբնավորում է հայ պատմագրությունը, և հեղինակը, ըստ երևույթին, ընթացել է ոչ թե ժամանակի խոսակցական լեզվով գրելու միտումով, այլ խրթնաբան ոճով ներկայացրել է իր ասելիքը։ Եզնիկը բյուրեղացրել է խոսակցական հայերենը, անշուշտ, ոճավորել է այն իր ընտրած նյութի և գրքի բովանդակության թելադրանքով, ստեղծել է նոր գիտաբառեր, կամ առաջին անգամ դրանք ինքն է գործածել գրական հայերենում՝ հիմնադրելով գրական լեզվի մի ուղղություն, որը հնտագայի ականավոր հայագետներն իրավացիորեն կոչել են եզնիկյան։ Եղիշեն գրել է պատմագեղարվեստական ժանրին հատուկ ոճով, կերտել է գրական նկարեն պատկերներ։ Այնուամենայնիվ, մեր կարծիքով, Եղիշեի լեզուն ու ոճն ավելի մոտ են ու հարազատ ոսկեդարյան հայերենին, քան հաջորդ՝ լեզվի հունաբան շրջանին։ Գեղագետ պատմիչի լեզուն և ոճը լեզվական այս երկու ուղղությունների մեջ գրավում են միջին դիրք՝ ոսկեդարյանի հակումով։ Իսկ Մովսես Խորենացին հունաբան հայերենի կարկառուն ներկայացուցիչ է և իր երկը ոճավորել է ոչ միայն նկատի ունենալով խոսակցական հայերենը, այլև ներառելով լեզվական նոր տարրեր։

Հեղինակային լեզվի և ոճի այս ընդհանուր առանձնահատկությունները դրսևորվել են նաև նախդիրների գործածության մեջ։

Նախդիրները հոլովների հետ գործածվում են այնպես, ինչպես ցույց է տրված № 1 աղյուսակում։

Աղյուսակ № 1

Հոլովներ	Առ	Ձ	Ընդ	Ըստ	Ի (յ)	Ց
Ո.	—	—	+	—	—	—
Տր.	+	+	+	+	+	—
Հ.	+	+	+	+	+	+
Բ.	+	+	+	+	+	—
Գ.	+	+	+	—	—	—

Ի տարբերություն գրաբարի նախադրությունների և աշխարհաբարի կապերի՝ նախդիրները, բացառությամբ ընդ-ի, սեռական հոլովի հետ չեն գոր-

[3] Կորյուն, Վարք Մաշտոցի, Երևան, 1941 (Համաբարբառ, Երևան, 1972)։ Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց, Վենետիկ, 1826 (Համաբարբառ, Երևան, 1972)։

Եղիշե, Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, Երևան, 1957 (Համաբարբառ, գիրք I, Երևան, 1974, գիրք II, Երևան, 1978)։ Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց. Տփղիս, 1913 (Համաբարբառ, գիրք I, Երևան, 1975, գիրք II, Երևան, 1976, գիրք III, 1976)։

ծածվում։ Ամբողջ V դ. մատենագրության մեջ հայտնի է միայն Եզնիկի բնագրում Զ-ի կիրառության մեկ օրինակ. «Այն ոչ եթէ անձինք ինչ են, այլ անուանք զբանտանաց» (էջ 98)։

Զբանգտանաց է ներկայացված նաև Եզնիկի երկի Համաբարբառում (էջ 281), որը խմբագրել է ականավոր գրաբարագետ և եզնիկագետ Ա. Աբրահամյանը։ Այստեղ զ-ի բնագրային լինելը անկասկած է։

Հր. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանում» (հ. Բ, էջ 219-220) սույն բառը բերված է ուղղականաձև՝ որպես զբանգտանք (հնարովի սուտ բան)։ Հղվում է նաև բանգտակ լինել (սուտ պատճառներ հնարել) բառակապակցությունը։ Սա նշանակում է, որ Հր. Աճառյանն ընդունել է զ-ի նախածանցական կիրառությունը։ Սակայն չեն բացառվում երկու հնարավոր լուծումներ՝ ա) իսկապես, Եզնիկն օգտագործել է զ-ն սեռական հոլովի հետ, և այն մի բացառիկ կիրառություն է, բ) զ-ն գրչագրական նորամուծություն է։

Ահա այս վեց նախդիրները թեք հոլովների հետ V դ. չորս ականավոր մատենագիրների երկերում հանդես են եկել այնպես, ինչպես երևում է № 2 աղյուսակում։

Աղյուսակ № 2

Հեղինակ	բառարանային բառաքանակ	ընդհանուր բառաքանակ	%	նախդիրներ	%
Կորյուն	1673	5882	28,47 %	867	15,07 %
Եզնիկ	3424	39745	8,61 %	4979	12,52 %
Եղիշե	4544	41063	11,06 %	5600	13,63 %
Խորենացի	7090	58547	12,10 %	9157	15,64 %
Ընդամենը՝	16733	145237	11,52 %	20623	14,19 %

Ընդհանուր բառաքանակի համեմատությամբ նախդիրների միջին գործածության հաճախականությունը, բացառությամբ Կորյունի գրքի, բարձր է նույն երկերի ընդհանուր բառաքանակի համեմատությամբ՝ բառարանային քանակի միջինից։ Փաստորեն, ըստ մեր ուսումնասիրած հեղինակների երկերի, նախդիրների գործածության միջին հաճախականությունը V դ. կազմում է 14, 19 %[4] այն դեպքում, երբ բառարանային բառաքանակի գործածության միջինը ընդամենը 11,52 % է։ Փաստերը բավականին խոսուն են։

V դ. վերոհիշյալ մատենագրերի երկերում կա 16733 բառաքանակ։ Դրանք գործածվել են 145237 անգամ, իսկ ընդամենը վեց նախդիրը կիրառվել է 20623 անգամ։ Ուշագրավ է, որ ներքին կապ կա ընդհանուր բառաքանակի համեմատությամբ՝ բառարանային բառաքանակի հաճախականության և ընդհանուր բառաքանակի համեմատությամբ նախդիրների հաճախականության միջև։ Եթե բարձր է բառարանային բառաքանակի հաճախականությունը, բարձր է նաև նախդրագործածման հաճախականությունը և ընդհակառակը։ Համեմատական աղյուսակից երևում է, որ բառարանային բառաքանակի հաճախականությունն ամենից ցածր է Եզնիկի երկում (8,61 %), ցածր է նաև նախդրագործածության հաճախականությունը (12,25 %)։ Խորենացու երկում բարձր է բառարանային բառաքանակի հաճախականությունը (11,52 %), բարձր է նաև նախդրագործածումը (15,64 %)։ Այդպես է իրերի վիճակը նաև Կորյունի և Եղիշեի երկերում։

Կորյունի գրքում մյուս դրվածքների համեմատությամբ շատ բարձր է բառարանային բառաքանակի միջին հաճախականությունը (28,47 %)։ Եթե Համաբարբառում ամեն ինչ ճիշտ է, այդ պետք է բացատրել Կորյունի երկի լեզվի և ոճի յուրահատկությամբ, հատկապես այնտեղ եղած բառային կրկնությամբ։

---

[4] Բոլոր հաշվարկները կատարված են էլեկտրոնային հաշվիչ մեքենայով։

Աղյուսակ № 3

Նախդիրների ընդհանուր գործածությունը Կորյունի, Եզնիկի, Եղիշեի և Խորենացու երկերում

Հոլովներ	Առ				Զ				Ընդ				Ըստ				Ի (յ)				Ց				Ընդամենը	
	Կորյուն	Եզնիկ	Եղիշե	Խորենացի	Կորյուն	Եզնիկ	Եղիշե	Խորենացի	Կորյուն	Եզնիկ	Եղիշե	Խորենացի	Կորյուն	Եզնիկ	Եղիշե	Խորենացի	Կորյուն	Եզնիկ	Եղիշե	Խորենացի	Կորյուն	Եզնիկ	Եղիշե	Խորենացի	Խոսքերի քանակը	%
Ս.	—	—	—	—	—	1	—	—	—	11	5	8	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	25	0,12
Տր.	10+ (6)	20	17	48	—	—	1	2	8	59	70	107	28	89	91	119	62+ (6)	307	342	503	—	—	—	—	1895	9,18
Հ.	18+ (7)	56+ (7)	160+ (10)	216+ (18)	366	2289	2601	4496	9	102	226	261	—	9	13	2	183+ (7)	772	1013	1679	4	48	50	108	14730	71,42
Բ.	(7)	9+ (27)	(4)	1+ (16)	14	122	25	98	—	—	—	1	—	10	4	2	131+ (7)	974	888+(3)	1270	—	—	—	—	3603	17,47
Գ.	4	16	6	69	9	35	43	103	1	26	27	30	—	—	1	—	—	—	—	—	—	—	—	—	370	1,79
Ընդամենը	53	135	197	368	389	2437	2670	4699	18	198	328	407	28	108	109	123	396	2053	2246	3452	4	48	50	108	20623	14,19 %

Քննվող հարցի համար կարևոր է նաև թեք հոլովների հետ յուրաքանչյուր նախդրի գործածության հաճախականության բացահայտումը (տե՛ս աղ. № 3)։

Ուսումնասիրությունից ստացվել են հետևյալ արդյունքները[5].

ա) սեռական հոլովի հետ գործածվել է միայն ընդ նախդիրը և այն էլ խիստ սահմանափակ հաճախականությամբ (0,12 %)։

բ) տրական հոլովի հետ արդեն ոչ միայն դրվում են հինգ նախդիրներ, այլև սկսում է բարձրանալ նրանց հաճախականությունը (9,18 %)։ Հայցական հոլովը նախգրագործածության բարձրակետն է (71,42 %)։ Այստեղ իրենց հատկապես զգալ են տալիս զ և ի նախդիրները։ Բացառական հոլովում համեմատաբար իջնում է նախգրագործածության հաճախականությունը (17,47 %), բայց գործիական հոլովում հասնում է ամենացածր աստիճանին (1,79 %)։

Առ ի նախդիրներ կան տրական (6) (միայն Կորյունի երկում), հայցական (42) և բացառական (54) հոլովների հետ, ընդամենը՝ 102: Սա ևս մի որոշակի թիվ է և ցույց է տալիս առ ի նախդիրների, ճիշտ է, ոչ տարածուն, բայց V դարում զգալի չափով գործածված լինելը։

Ուշագրավ է նաև այս չորս մատյաններում յուրաքանչյուր նախդրի գործածության հաճախականությունը՝ առանձին երկի և բոլոր երկերի նախդիրների համեմատությամբ (տե՛ս աղ. № 4)։

Առ նախդրի միջին գործածությունը 3,64 %է։ Այն ամենից շատ է հանդես եկել Կորյունի (5,86 %) և Խորենացու (4,01 %) գրքերում, առանձնապես ցածր է Եղնիկի երկում (2,71 %)։

Զ նախդրի միջին հաճախականությունը 49,43 % է, մինչդեռ ի նախդրինը 39,5 % է[6]։ Զ նախդիրը բոլորից շատ է կիրառված Խորենացու երկում (51,31 %), ամենից քիչ՝ Կորյունի գրքում (43,85 %)։ Իսկ ի նախդրի գործածությունը գրեթե միաչափ է Եղնիկի, Խորենացու և Եղիշեի գրվածքներում, մի փոքր ավելի է Կորյունի գրքում։

Ընդ և ըստ նախդիրները չնայած ոչ շատ, բայց միշտ էլ մատենագրությունում դրսևորել են բազմազան իմաստներ։ V դ. ընդ նախդրի միջին գործածությունը 4,61 % է, IX—XI դդ.՝ 5,92 %, ըստ նախդրինը V դ.՝ 1,78 % է, իսկ IX-XI դդ. հասնում է 3,34 %-ի։ Ուրեմն, միշտ էլ ընդ-ը ըստ-ի համեմատությամբ ավելի գործուն է եղել։ V դ. այն համեմատաբար շատ է դրսևորվել Եղիշեի (5,85 %) և Խորենացու երկերում (4,44 %)։ Դարասկզբի մատենագրությունում սահմանափակ է եղել, որը ցույց է տալիս Կորյունի գրքում ընդամենը 2 %-ի գործածությունը։ Մինչդեռ ըստ նախդիրը աստիճանաբար սահմանափակ կիրառություն է ստացել, այնպես որ Կորյունի գրքի 3,15 %-ի դիմաց Խորենացու երկում կա 1,34 % գործածություն։

Ց նախդրի միջին հաճախականությունը 1,01 % է, այդպես է և IX—XI դդ. (0,78 %)։ Քանի որ զ նախդիրը դրվել է միայն հայցական հոլովի հետ և այն էլ հիմնականում երկու իմաստի դրսևորմամբ՝ մինչև և ճանգման ճարաբերություն, նրա հաճախականությունն էլ այդքան սահմանափակ է։

Թարգմանական գրականությունում, մասնավորապես Աստվածաշնչում նախդիրների գործածության հաճախականությունը ինչ-որ չափով պարզելու համար քարտագրել ենք «Ողբք Երեմիա»-ից մի հատված, և ստացվել է գրեթե վերը նշված համամասնությունը։ Ընդհանուր նախգրագործածությունը 14,4 % է, իսկ առանձին նախդիրներ կիրառվել են այսպես՝

առ	-1,09 %	ըստ	-1,09 %
զ	-54,09 %	ի	-42,07 %
ընդ	-1,63 %	ց	-

---

5 Աղյուսակում փակագծերի մեջ նշված են առ ի գործածությունները։ Կորյունի երկի համաբարբառում (էջ 78) հայցական հոլովի հետ են հաշվված տրականով դրված 7 գործածություններ։

6 IX—XI դդ. հայ պատմագրությունում պատկերը միանգամայն փոխվում է, քանի որ ի նախդրի հաճախականությունը (45, 30 %) ավելի է զ նախդրի (39, 98 %) հաճախականությունից 5,39 %-ով։

Աղյուսակ № 4

Հեղինակ	Առ	Ձ	Ընդ	Ըստ	Ի (յ)	Ց
Կորյուն	5,86 %	43,85 %	2 %	3,15 %	44,64 %	0,45 %
Եզնիկ	2,71 %	48,94 %	3,97 %	2,16 %	41,23 %	0,96 %
Եղիշե	3,51 %	47,67 %	5,85 %	1,94 %	40,1 %	0,89 %
Խորենացի	4,01 %	51,31 %	4,44 %	1,34 %	37,69 % + ունեք՝ 4,18 % = 41,87 %	1,17 %

Առանձին նախդիրների միջին գործածությունը V դ. այնպիսին է, ինչպես ցույց է տրված № 5 աղյուսակում՝

Աղյուսակ № 5.

Առ	Ձ	Ընդ	Ըստ	Ի (յ)	Ց
3,64 %	49,43 %	4,61 %	1,78 %	39,5 %	1,01 %

Այսպիսով, կատարված ուսումնասիրությունը ոչ միայն պարզում է V դ. չորս ականավոր հեղինակների գրքերում, հետևաբար և ամբողջ մատենագրությունում նախդիրների գործածության բարձր հաճախականությունը (14,19 %), այլև ցույց է տալիս նախդրագործածության ոճական կարևոր արժեքը՝ ինչպես լեզվական որոշակի փուլերի, այնպես էլ առանձին հեղինակների, նրանց գրվածքների առանձին մասերի լեզվաոճական յուրահատկությունները բացահայտելու համար։ Մեզ թվում է, որ նման աշխատանք պետք է կատարել՝ պարզաբանելու նաև VI-VIII և IX-XI դդ. ամբողջ մատենագրությունում նախդիրների հաճախականությունը, որը ամուր հիմք կտա բացահայտելու թեք հոլովների հետ նախդիրների դրսևորած որոշ իմաստների սահմանափակումը և նոր իմաստների դրսևորումը։

Նախդիրների նման ուսումնասիրությունը հայ քերականագիտության այսօրվա հասունացած հարցերից է։

ЧАСТОТНОСТЬ УПОТРЕБЛЕНИЯ ПРЕДЛОГОВ В АРМЯНСКОЙ ПИСЬМЕННОСТИ V В.

ГУРГЕН МАНУКЯН

Резюме

Частота употребления предлогов способствует раскрытию сходства и различия языковых этапов, характеристике языково-стилистических особенностей произведений того или иного древнего автора.

Для установления частоты употребления предлогов в письменности V в. взяты за основу «Житие Маштоца» Корюна, «Порицание ересей» Езника Кохпаци, «О Вардане и войне армянской» Егишэ и «История Армении» Мовсеса Хоренаци. В указанных сочинениях употреблено 16733 слова, которые встречаются 145237 раз. Из них 20623—предложные употребления. В V в. средняя употребляемость предлогов составляла 14,19%, причем предлог *առ*—3,64%, *ց*—49,43%, *ընդ*—4,61%, *ըստ*—1,78%, *ի(յ)*—39,5%, *ց*—1,01%.

Частотность употребления предлогов у Корюна составляет—15,07%, у Езника Кохпаци—12,52%, Егишэ—13,63%, Хоренаци—15,64%.